ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԳՎՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Հագվու համայնք
հեռ. 0253-6-06-57,էլ. փոստ hagvi.lori@mta.gov.am

Թիվ 160
«22»դեկտեմբերի2016թ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Կից ներկայացնում ենք Հագվու համայնքի ավագանու որոշում թիվ 53-54-ը:

Հագվու համայնքի ղեկավար՝ Հ.Մայիլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԳՎՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզիՀագվու համայնք,հեռ. 6-06-57
Էլ.փոստ hagvi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի2016 թվականի N 53-Ա

ՀԱԳՎՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով Հագվու համայնքի ավագանին որոշում է
Հաստատել Հագվու համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 20-ի նիստի օրակարգը՝
1.Հագվու համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 20-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Համայնքի 2017-2021թթ –ի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

ԿՈՂՄ (5) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

Մուշեղ Մանուկյան
Միհեր Դանիելյան
Միհեր Մանյան
Օսյան Արշակ
Միհեր Կոստանդյան

Հագվու համայնքի ղեկավար Հ. Մայիլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԳՎՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզիՀագվու համայնք,հեռ. 6-06-57
Էլ.փոստ hagvi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի2016 թվականի N 54-Ն

ՀԱԳՎՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով
Հագվու համայնքի ավագանին որոշում է
1. Հագվու համայնքի հնգամյա՝ 2017-2021թթ զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել 26.02.2012թ-ի «Հագվու համայնքի 2013-2016թթ-ի զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին» թիվ 07 որոշումը:
3, Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներրորդ օրը:

ԿՈՂՄ (5) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

Մուշեղ Մանուկյան
Միհեր Դանիելյան
Միհեր Մանյան
Օսյան Արշակ
Միհեր Կոստանդյան

Հագվու համայնքի ղեկավար Հ. Մայիլյան

Հաստատված է
Հագվու համայնքի ավագանու
20.12.2016 թ. N 54-Ն որոշումով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԳՎՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի և համայնքի ղեկավարի կողմից:

գ. Հագվի 2016

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի հայրենակիցներ

ՀՀ Լոռու մարզի Հագվու համայնքապետարանը 2013-2016թթ-երի քառամյա ծրագիրը, որը հաստատվել է Հագվու համայնքի ավագանու կողմից և իրագեկվել է Ձեզ՝ կատարվել է շուրջ 80 տոկոսով: Քառամյա ծրագրում նախատեսված է եղել համայնքային կենտրոնի կառուցում,ճանապարհների վերանորոգում, փողոցների լուսավորության անցկացում և ոռոգման ցանցի անցկացում: Նշված ծրագրերից չի կատարվել ոռոգման ցանցի անցկացումը՝ համապատասխան ֆինանսներ չլինելու պատճառով: Սակայն կատարված ծրագիրերը բավարար չէր բնակչության բարեկեցության բարձրացման և համայնքին կայուն զարգացում ապահովելու համար: Այդ պատճառով հաշվի առնելով հանրային բաց լսումներում ձեր առաջարկությունները, համայնքի սոցիալտնտեսական իրավիճակը, առկա հիմնախնդիրները, տնտեսական, ֆինանսական, բնական ու մարդկային ռեսուրսները, դրանք քննարկելով համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների և ավագանու համատեղ նիստերում, համայնքի ավագանու կողմից ընդունվել է ՀՀ Լոռու մարզի Հագվու համայնքի հնգամյա **(2017 – 2021 թթ.)** զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ):

Ծրագրի հիմնական ուղղություններն են՝
1. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում
2. Հանդիսության սրահի կառուցում
3. Ոռոգման ցանցի կառուցում
Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպում
5. Հատապտղի արտադրամաս կառուցել

Այս ծրագրի գերակա ոլորտներն են.
Բնակչության առողջության և կենցաղային մակարդակի բարձրացում
Գյուղատնտեսության զարգացում
Մատաղ սերնդի դաստիարակություն

1 • ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ,

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Համայնքի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության,

տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ալավերդի, Օձուն Կաճաճկուտ Աքորի համայնքներին:

Հ/հ Բնակավայրի անվանումը՝ Հագվի

Վարչական տարածքը 3275.15(հա)

Առկա բնակչության թվաքանակը 514 (մարդ)

Աղյուսակ 1. Համայնքի բնակավայրերի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության,տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Առկա բնակչության թվաքանակը (մարդ)	Մշտական բնակչության թվաքանակը (մարդ)	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը
1	Հագվի	3275.15	514	517	117	140
	Ընդամենը	3275.15	514	517	117	140

Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ալավերդի, Օձուն Կաճաճկուտ Աքորի համայնքներին:

Լոռու մարզի Հագվի գյուղը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելքում, Ալավերդի քաղաքից 12 կմ հեռավորության վրա: Չնայած գյուղը հիմնադրվել է 17-րդ դարում, գյուղում կա փոքրիկ եկեղեցի, որը կառուցվել է 12-րդ դարում: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1150մ բարձրության վրա:Գյուղը Օձուն համայնքի կազմում եղել է 1961 թ-ից և առանձնացել է 1987 թ-ին:

Հագվի գյուղը բնակեցվել է Օձունից և Հաղպատից տարբեր Ժամանակներում տեղափոխված բնակիչներով:

Գյուղի կլիման բարեխառն է, ձմեռը մեղմ, ամառը զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից մեծապես տուժում են գյուղատնտեսական

աշխատանքները: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից 155 կմ է, մարզկենտրոնից՝ 45 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 12 կմ:Գյուղը հարուստ է անտառներով, վայրի բերքատու ծառերով և բնական աղբյուրներով: Գյուղի տարածքով է անցնում Սեղվի գետը, որը գյուղից ներքև միախառնվում է Դեբեդ գետին:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 514 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 261 և կանայք՝ 253: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Գ. Հագվի
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	514
	Տղամարդիկ	261
	Կանայք	253
	0-6 տարեկան , այդ թվում՝	39
	- 0-3 տարեկան	21
	- 3-6 տարեկան	18
	7-17 տարեկան	56
	18-63 տարեկան	340
	63-ից բարձր տարեկան	77
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	96
	Տարիքային և աշխատանքային	79
3.	Փախստականներ	-
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	-

5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	2
8.	Հաշմանդամներ, այդ թվում	-
	Մանկուց հաշմանդամներ	1
9.	Աշխատունակներ	340
10.	Զբաղվածներ	134
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	206
	Գրանցված	5
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	117
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	30
	Նպաստառու ընտանիքների թիվը	24
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմ-ներում զոհվածների ընտանիքների թիվը	-
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	5
	Անօթևան ընտանիքներ	-
16.	Բնակարանային պայմանների բարելավման	15

	կարիք ունեցող ընտանիքների թիվը	
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	5
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	5

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2016թ. սեպտեմբերին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 5 անդամից, և համայնքի ղեկավարը, որը ձևավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 4 աշխատակցից: Համայնքի ավագանին 2016թվականի նոյեմբերի 21-ի թիվ 44-Ա որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

- համայնքի ղեկավար - 1 միավոր, 202,4 հազ. դրամ,

- աշխատակազմի քարտուղար - 1 միավոր, 126,4 հազ. դրամ,

- առաջատար մասնագետ – հաշվապահ - 1 միավոր, 89,596 հազ. դրամ,

- առաջին կարգի մասնագետ - 1 միավոր, 73,752 հազ. դրամ,

- երկրորդ կարգի մասնագետ - 1 միավոր, 72,752 հազ. դրամ,

- հավաքարար – 0,5 միավոր, 72,752 հազ. դրամ:

Ընդամենը՝ 5,5 միավոր, 564,900 հազ. դրամ:

1.4 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի վարչական տարածքում գործող պետական կազմակերպությունն է՝ Հազվու հիմնական դպրոցը ՊՈԱԿ-ը:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աղբամանների և աղբահավաք մեքենայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում գյուղի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Հագվի համայնքի մոտավորապես 60%-ն ապահովված է փողոցային

լուսավորությամբ: բնակավայրի գերեզմանատները ունեն ցանկապատերի վերանորոգման կամ մասնակի նորոգման կարիք:

Ստորև բերված է այս բնագավառում առկա իրավիճակի վերլուծությունը՝

Գյուղի ջրամատակարարումն իրականացվում է «Հայջրմուղկոյուղի » ՓԲԸ Ալավերդու մասնաճյուղի կողմից, ինքնահոս եղանակով:

Ջրամատակարարումը շուրջօրյա է, 2005 թ.-ին ՀՄՆՀ-ի միջոցներով կառուցվել է արտաքին ցանցի 3,5 կմ-ոց և ներքին ցանցի 2 կմ-ոց հատվածը: Գյուղի դպրոցը և բուժկետը ապահովված են ջրով: Գյուղը գազաֆիկացված է, աղբահանություն չի իրականացվում:

Բնակավայրում կա 3 գերեզմանատուն, որոնցից մեկը ցանկապատված է մետաղյա ցանցով, որն ունի վերանորոգման կարիք:

Գյուղում 2013թ-ից բնակավայրում տեղադրված է հակակարկտային կայան:

ՀՀ Կառավարության հրատապ ծրագրով 2013թ-ին համայնքում կառուցվել է համայնքային կենտրոն:

Միջհամայնքային ճանապարհը 75 % -ով ասֆալտապատված է ,մնացած մասը կասֆալտապատվի 2017 թ-ին:Ասֆալտապատված է նաև ներհամայնքային փողոցների կենտրոնական մասը, նախատեսված է փողոցների ասֆալտապատումը շարունակել 2017 թ-ին:

1.6 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Հագվի համայնքում կան միայն բնակելի առանձնատներ:

Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 15800 քմ, Համայնքում առանձնատների թիվը՝ 213, բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը՝ 15:Համայնքի առանձնատների մեծ մասը վերանորոգման կարիք ունեն, նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ համարյա չեն կառուցվում:

1.7 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 3275,15 հա, այդ թվում՝

գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1848,56 հա, բնակելի շինությունների տակ հողեր՝ 72,68 հա, արդյունաբերական, արտադրական շինությունների տակի հողեր՝ 4,59 հա, ճանապարհների տակի հողեր՝ 0,96 հա, առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր՝ 2,39 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1,55 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝2,39 հա, անտառային ֆոնդի հողեր՝ 1340,3 հա, ջրային ֆոնդի հողեր՝ 5,08 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփակա-նաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է՝ 0,95 հա

1.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում, այդ պատճառով համայնքի վարելահողերն աստիճանաբար վերածվել

են խոտհարքների կամ բնակչությունն անասնակերի մի մասը ստիպված է լինում գնել հարևան համայնքներից:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 266 գլուխ, այդ թվում կովեր՝ 116:Ոչխարների և այծերի գլխաքանակը կազմել է՝ 144 գլուխ, ավանակ՝ 1, ձիերի՝20, հավերի և այլ թռչունների՝ 297, մեղվաընտանիքների քանակը՝ 206: Համայնքի տնային տնտեսություններ մի մասը հաջողությամբ զբաղվում է մեղվապահությամբ:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձ հողամասերում աճեցնում են կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ, զբաղվում են նաև պտղաբուծութ- յամբ (տանձ, խնձոր, սալոր), մշակում են հացահատիկային, կերային մշակաբույսեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում խոշոր եղջերավոր անասնապահությամբ զբաղվող տնային տնեսությունների մեծ մասը գարնանից մինչև գրեթե աշնան վերջը անասուններին արածեցնում են գյուղամերձ կամ հեռագնա արոտներում, չնայած արոտներ տանող ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում:

Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

1.9 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի անտառային ֆոնդի պահպանությունն իրականացվում է Լալվարի անտառտնտեսության կողմից: Համայնքի տնային տնտեսություններն իրենց արտադրած կենցաղային աղբն տեղափոխում են իրենց ուժերով և շաբաթօրյակների միջոցով: Այդ ուղղությամբ կարիք կա լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից: Համայնքն իր ուժերով ի վիճակի է լուծելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը, ծավալել միջհամայնքային համագործակցություն՝ Ալավերդի համայնքում առկա աղբավայրը համատեղ օգտագործելու ուղղությամբ:

1.10 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը գլխավոր մայրուղու հետ կապող ճանապարհը ասֆալտապատ է: Համայնքի ներսում ավտոկանգառներ չկան: Ներկայումս գյուղի բնակչությունը հիմնականում օգտվում է Ալավերդի քաղաքի շուկայից՝ չնայած տրանսպորտային առկա դժվարություններին: Գյուղում շահագործվում են 48 մարդատար և 3 բեռնատար մասնավոր ավտոմեքենաներ: Գյուղում կան նաև մասնավոր 3 տրակտոր, որոնցից 1-ը թրթուրավոր են, իսկ 2-ը՝ անիվավոր: Գյուղի տարածքում կան 2 փոքր կամրջակ, որոնք գտնվում են գյուղով անցնող գետակների վրա:

Գյուղը չունի ավտոբուսային հաղորդակցություն այլ բնակավայրերի հետ

1.11 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են 5 առևտրի կետ,որոնք զբաղվում են ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով : Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե՝ գործունեության թույլտվության համար:

1.12ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է հիմնական հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 33 աշակերտ: Գյուղից աստիճանական արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել նաև դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազել է:

Դպրոցում կան 19 աշխատող, որոնցից 12-ը մանկավարժ են: Դպրոցի շենքը հիմնականում վերանորոգված է և ներկայումս գտնվում է բարվոք վիճակում: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում վառելափայտով, սակայն ցանկալի է մոտ ապագայում այդ նպատակով օգտագործել գազ, առավել ևս, որ համայնքում անցկացված գազատարի և դպրոցի միջև

հեռավորությունը կազմում է շուրջ՝200 մ:

1.13 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքը հարուստ չէ մշակութային օջախներով, սակայն համայնքի տարածքում կան հազվագյուտ պատմամշակութային նշանակություն ունեցող մեկ եկեղեցի , հին գյուղատեղիներ և խաչքարեր, որոնք ֆինանսական միջոցների սղության պատճառով գրեթե չեն վերանորոգվել:

Գրադարանը տեղակայված է համայնքին պատկանող շինությունում , ունի մոտ 7329 կտոր գրքային ֆոնդ: Շենքը գտնվում է անմխիթար վիճակում,այդ իսկ պատճառով էլ գրքերը նպատակահարմար է հանձնել համայնքի դպրոցին:

Համայնքն չունի մշակույթի տուն,սակայն համայնքային կենտրոնն ունի համայնքային դահլիճ՝ 70 նստատեղով:

1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքի տարածքում գործում է բուժկետ,որտեղ աշխատում է 1 բուժքույր:Շենքը ապահովված է խմելու ջրով, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով: Շենքը կարիք ունի մասնակի վերանորոգման:

1.15 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի տարածքում կան հանգստի գոտիներ և գեղեցիկ հուշաղբյուրներ, որտեղ համայնքի բնակիչները և շատ զբոսաշրջիկներ անց են կացնում իրենց հանգիստը:

1.16 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 340 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են միայն 134-ը, աշխատանք չունեն 206-ը, սակայն վերջիններից միայն 10-ն են գրանցված Ալավերդու զբաղվածության տարածքային կենտրոնում որպես գործազուրկներ, քանի որ համայնքի բնակիչները հիմնականում հողերի սեփականատերեր են և, համաձայն ՀՀ օրենսդրության, չեն համարվում գործազուրկ:

Համայնքի ընտանիքներից 24-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում: Համայնքում բնակվում են նաև17 հաշմանդամ, բնակարանի կարիքավոր են 5 ընտանիքներ, բնակարանի բարելավման կարիք ունեն 25 ընտանիքներ:

1.17 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է:

Ավագանու որոշմամբ ստեղծվել է աղետների դեպքում համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովը և հաստատվել է բնակչության տարահանման գործողությունների պլանը:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

□ Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը տարածաշրջանային կենտրոն Ալավերդուն, Վանաձոր-Բագրատաշեն ճանապարհից և երկաթգծից)

□ Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը

□ Համայնքի հարակից անտառամերձ գոտու առկայությունը

□ Համայնքում հեռախոսակապի և գազաֆիկացման առկայությունը

□ Համայնքի բազմատեսակ հատապտղի առկայությունը

□ Համայնքը ապահոված է խոտհարքներով,որը խթան է հանդիսանում անասնապահության ընդլայնմանը

□ Համայնքի դպրոցի բարձրագույնավարտ մանկավարժների առկայություն

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

□ Միջհամայնքային ճանապարհի մի մասի անբարեկարգ վիճակը

□ Համայնքում խմելու ջրի ներհամայնքային համակարգերի առկայությունը

□ Համայնքում ջրահեռացման կենտրոնացված համակարգերի

(կոյուղու) բացակայությունը

□ Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը, ժամանակակից աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների բացակայությունը

□ Ոռոգման համակարգի բացակայությունը

□ Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝

□ Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը

□ Համայնքում գործազրկության բարձր մակարդակը

□ Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ թիվը

□ Համայնքում մանկապարտեզի բացակայությունը,

□ Համայնքից տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով

2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

□ Խելամտորեն օգտագործել համայնքից դուրս բնակվող համագյուղացիների ֆինանսական և մտավոր ընդունակությունները,

□ Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների

հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ ավելի որակյալ մասնագետների

աշխատանքի, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման

□ Բարձրացնել ՏԻՄ-երի ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և

իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր

□ Աստիճանաբար ընդլայնել համայնքի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման

մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ՝ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալները և արդյունավետությունը, և, որպես հետևանք, բնակչությանը դրանց հասանելիության և որակի մակարդակները

□ Էականորեն մեծացնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքի սեփականություն համարվող հողային, գույքային և ֆինանսական ռեսուրսների բազային ծավալների մեծացման և դրանց նպատակային օգտագործման հետ

□ Համայնքի ընդլայնված տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնական պաշարների, պատմամշակութային և

այլ արժեքների առկայությունից

□ Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը,

2.2 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

□ Համայնքի բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը

□ Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը

□ Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը

□ Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՁՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության,

հատապտուղների վերամշակման, մաքուր, բարեկարգ, առնտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուց-վածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

□ համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի

տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,

□ հատապտուղների հանձնման և վերամշակման

արտադրամասերի ստեղծում և գործարկում,

□ համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,

□ համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,

□ Ներհամայնքային փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում,

□ համայնքի բնակչության սոցիալտնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանությունև սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,

□ ՏԻ-անը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,

□ ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և

հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,

□ համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,

□ նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման անմիջական նպատակներ են.

1.Համայնքի գույքի կառավարում .
2. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն.
3. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.
4. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում.
5. պետության պաշտպանության իրականացման աջակցում.

6. Աղետի ռիսկերի նվազեցում և արտակարգ իրավիճակներում բնակչության ու քաղաքացիական պաշտպանության իրականացում.
7. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում.
8. Շրջակա միջավայրի պահպանություն.
10. Երիտասարդության խնդիրների լուծման ուղղված միջոցառումներ.
11. Բնակչության առողջական մակարդակի բարձրացում.
12. Աշխատատեղերի ստեղծում

Ծրագրի անմիջական նպատակների չափելիությունն ապահովելու համար սահմանվել է կատարողականի առանցքային ցուցանիշներ և ցուցանիշների թիրախային արժեքներ, որոնք ներկայացված են ՀՀԶԾ ծրագրերի անձնագրերում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

4.1ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Հազվու համայնքի ՀՀԶԾ – ում ընդգրկված ծրագրերն նախատեսված է իրականացնել .
Համայնքի սեփական միջոցներով.
Ներքին պաշտոնական դրամաշնորհներով.
Բնապահպանական ծրագրերով
Պետություն – համայնք – մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ.
Բարեգործություն և նվիրատվություն.
Այլ աղբյուրներ.

ՀՀԶԾ – ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար առկա և անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացված են ՀՀԶԾ ծրագրերի ֆինանսավորման ամփոփաթերթում:
Համայնքը իր միջոցներով և այլ ներդրումներով պատրաստ է իրականացնել հետևյալ ծրագրերը

4.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՀՀ Լոռու մարզի Հազվու համայնքի **2017թ.** Բյուջեն կազմվել է ելնելով համայնքի զարգացման հնգամյա պլանից:

Համայնքում առաջիկա հինգ տարիներին կանխատեսվում է.
2017 թ. - 42 151,3 հազար դրամ
2018 թ. – 42858,7 հազար դրամ
2019 թ. – 29330,0 հազար դրամ
2020թ. – 34 000,0 հազար դրամ
2021թ. – 43 000,0 հազար դրամ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից,

համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ- երի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից համայնքի ղեկավարին կից գործող ՀՋՀԾ-ի և տարեկան բյուջեիկառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը ներառելու համայնքի 2017-2021թթ. ՀՋՀԾ-ում: